

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա	[3] Համար
4	Մարտ	2019 թ.				Բ	7607526020
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
4	Մարտ	2019 թ.				Սերիա	Համար
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կերման ամսաթիվ			[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)							
[7.1] ՀՆՄ կտրոսի համար							

Ցառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրոյ միկ. շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ցառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱՍԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր		Համար					
			Ամսաթիվ					

[21] Ցառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№/Ը/Կ	Ցառայությունների (աշխատանքների) անվանումը (ռովանդակությունը)	Ծավալի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծանուցանված քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-պարսկերեն լեզվի զրավոր թարգմանություն	էջ	80	2900		232000
2	Հայերեն-ֆրանսերեն լեզվի զրավոր թարգմանություն	էջ	6	3580		21480
3	Հայերեն-ֆրանսերեն լեզվի զրավոր թարգմանություն	էջ	4	3580		14320
4	Ռուսերեն-հայերեն լեզվի զրավոր թարգմանություն	էջ	18	2300		41400
5	Ռուսերեն-հայերեն լեզվի զրավոր թարգմանություն	էջ	2	2300		4600
Ընդամենը						313800

Ցառայություն մատուցող (աշխատանք կատարող)
STEPANYAN H MAYAK 2301850293
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Ցառայություն (աշխատանք) ստացող
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

04/03/2019 10:40:11



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

«22» փետրվարի 2019թ.

ք. Երևան

Երևան քաղաքի դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական ՍԼՍմբատյանս, ուսումնասիրելով թիվ 59105718 քրեական գործն ըստ մեղադրանքի Մաջիդ Սաֆարալիի էսմայիլզադեհի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ երկու դրվագ, **ՀՀ** քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ երկու դրվագ, Նասրին Հասսանի Արաբի Կարչեգանիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արա Ջիվանի Ազիզյանի՝ **ՀՀ** քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Դավիթ Աղասու Մանուկյանի՝ **ՀՀ** քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Սարգիս Ալեքսանի Օհանջանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և Էդգար Մանվելի Ախոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցները, ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով 2018թ. փետրվարի 15-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Նուբարաշենի կամրջի մոտից, թմրամիջոց պահելու կասկածանքով «Մերսեդես» մակնիշի 35 FX 592 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ոստիկանության Նուբարաշենի բաժանմունք բերման են ենթարկել վարորդ, Նուբարաշեն 5-րդ փողոցի 6-րդ տան բնակիչ՝ 23.07.1985թ. ծնված Վիրաբ Իվանի Սարգսյանին և ուղևոր՝ Նուբարաշեն 11-րդ փողոցի 5-րդ շենքի 28-րդ բնակարանի բնակիչ՝ 30.05.1981թ. ծնված Էդգար Մանվելի Ախոյանին, որտեղ վերջինս հայտարարել է, որ մեքենայում ինքնաշեն ծխամուրճով ծխել է մեթամֆետամին տեսակի թմրամիջոց, որի մի մասը՝ պ ո լի էթի լեն այ ին փաթեթով թողել է ավտոմեքենայի առջևի աջ նստատեղին:

Նույն օրը Էդգար Ախոյանի մասնակցությամբ կատարված զննությամբ հիշյալ ավտոմեքենայի առջևի աջ նստատեղի վրայից հայտնաբերվել և առգրավվել է 0.069 գրամ քաշով մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

Դեպքի առթիվ 2018 թվականի փետրվարի 16-ին ՀՀ ոստիկանության ԵԶՎ Էրեբունու բաժնի ստաբնության բաժանմունքում որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով թիվ 12159918 քրեական գործը հարուցելու և վարույթ ընդունելու մասին:

Նույն օրը թիվ 12159918 քրեական գործը նախաքննությունը շարունակելու համար ընդունվել է ՀՀ ԶԿ Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի վարույթ:

2018 թվականի մարտի 7-ից քրեական գործի նախաքննությունը շարունակվել է ՀՀ ԶԿ Երևան քաղաքի քննչական վարչությունում:

Վարույթն իրականացնող մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ թիվ 12159918 քրեական գործից անջատվել է Մաջիդ Սաֆարալիի էսմայիլզադեհի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով/2 դրվագ/, ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3 մասի 1-ին և 3-րդ կետերով/2 դրվագ/, Նասրին Հասսանի Արաբի Կարչեգանիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3 մասի 1-ին և 2-րդ կետերով, Արա Ջիվանի Ազիզյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3 մասի 1-ին և 2-րդ կետերով, Դավիթ Աղասու

Մանուկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3 մասի 1-ին և 2-րդ կետերով, Սարգիս Ալեքսանի Օհանջանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3 մասի 1-ին, 2-րդ կետերով և եղգար Մանվելի Ախոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2 մասի 2-րդ կետով հանցավոր արարքներ կատարելու մասը և գործին շնորհվել է թիվ 59105718 համարը:

Գործով մեղադրյալներ՝ Մաշիո Սաֆարալիի էսմայիլզադեհը և Նասրին Հասսանի Արաբի Կարչեգանին տիրապետում են պարսկերեն լեզվին, հետևաբար մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածները անհրաժեշտ է նրանց տրամադրել պարսկերեն լեզվով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Նկատի ունենալով, որ «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Կրիստինա Խանիկյանն ունի պարսկերեն լեզվից թարգմանիչի որակավորում, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 53-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 12105718 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Կրիստինա Սուրենի Խանիկյանին /ծնվ. 27.05.1979թ., անձ. AG 0494708/:

2. Կրիստինա Խանիկյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

**Երևան քաղաքի դատախազության դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝**



Ա.Ս.Սմբարյան

Ինձ պազրաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Կ. Խանիկյան

« 22 » փետրվարի 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«23» փետրվարի 2019թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանս, ուսումնասիրելով Սերգեյ Խաչատրյանի հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 11130916 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Սերգեյ Խաչատրյանը ներկայումս գտնվում է Ֆրանսիայի Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունից ստացվել են Սերգեյ Խաչատրյանի հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ ֆրանսերեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Հիշյալ կոնվենցիային Ֆրանսիայի Հանրապետության կառավարության կողմից արված հայտարարության համաձայն՝ հարցումը և կից փաստաթղթերը պետք է ուղեկցվեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզու համարվող ֆրանսերեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով, որ Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմինն հասցեագրված՝ Սերգեյ Խաչատրյանի հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել ֆրանսերեն, իսկ Ալինա Խաչատրյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Սերգեյ Խաչատրյանի հանձնման հարցման ֆրանսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ալինա Խաչատրյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0696778, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի AD :041130 դիպլոմ) և նրան պարզաբանել

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ



Դ.Մելքոնյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Ա.Խաչատրյան

«23».....02..... 2019թ.

//

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«27» փետրվարի 2019թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանս, ուսումնասիրելով Ռուզաննա Հունանյանին հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 58217916 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ռուզաննա Հունանյանը ներկայումս գտնվում է Ֆրանսիայի Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչությունից ստացվել են Ռուզաննա Հունանյանի հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ ֆրանսերեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Հիշյալ կոնվենցիային Ֆրանսիայի Հանրապետության կառավարության կողմից արված հայտարարության համաձայն՝ հարցումը և կից փաստաթղթերը պետք է ուղեկցվեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզու համարվող ֆրանսերեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով, որ Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմնին հասցեագրված՝ Ռուզաննա Հունանյանի հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել ֆրանսերեն, իսկ Ալինա Խաչատրյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ռուզաննա Հունանյանի հանձնման հարցման ֆրանսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ալինա Խաչատրյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0696778, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի AD №041130 դիպլոմ)

և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ



Դ.Մելքոնյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Ա.Խաչատրյան

«27» 02 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

28 փետրվարի 2019թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով Ալեքսանդր Գենադիի Օգլորլինի քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմիններին հանձնելու մասին ՌԴ գլխավոր դատախազությունից ստացված հարցումը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

«Ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, 2019 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 02²⁰-ին, հայտնաբերվել և բաժին է բերման ենթարկվել՝ Դուբայ-Երևան թիվ 717 չվերթի ուղևոր ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրվող, ՌԴ «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի և ՌԴ ՆԳՆ նախարարության Խաբարովսկի տարածաշրջանի ներքին գործերի վարչության կողմից 2014 թվականի ապրիլի 4-ից հետախուզման մեջ գտնվող, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ալեքսանդր Գենադիի Օգլորլինը, ով նույն օրը՝ ժամը 02²⁰-ին, ձերբակալվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Դ. Հարությունյան) 2019 թվականի հունվարի 29-ի թիվ ԵԴ/0041/06/19 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության նույն օրվա միջնորդությունը՝ Գենադի Օգլորլինի նկատմամբ 30 (երեսուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

«Ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, 2019 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 02²⁰-ին, հայտնաբերվել և բաժին է բերման ենթարկվել՝ Դուբայ-Երևան թիվ 717 չվերթի ուղևոր ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրվող, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ալեքսանդր Գենադիի Օգլորլինը, ով նույն օրը՝ ժամը 02²⁰-ին, ձերբակալվել է:

«Ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, 2019 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 02²⁰-ին, հայտնաբերվել և բաժին է բերման ենթարկվել՝ Դուբայ-Երևան թիվ 717 չվերթի ուղևոր ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրվող, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ալեքսանդր Գենադիի Օգլորլինը, ով նույն օրը՝ ժամը 02²⁰-ին, ձերբակալվել է:

Համաձայն «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է: Հաշվի առնելով, որ Արմինե Մինասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են «Վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած

իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Գենադի Օգլորլինի հանձնման մասին հարցման և կից փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Արմինե Մինասյանին (անձնագիր՝ AF սերիայի թիվ 0479573, տրված 03.07.2002թ., 004-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09.07.2012թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական

Ա. Կոստանոյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատրասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«28».....02.....2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

01 մարտի 2019թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա.Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Վրաստանի իրավասու մարմինների կողմից հետախուզվող Շոթա Ցազարեիշվիլիի հայտնաբերման կապակցությամբ Վրաստանի գլխավոր դատախազությունից ստացված փաստաթուղթը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2019թ. փետրվարի 28-ին՝ ժամը 23:30-ին, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն բերման է ենթարկվել, այնուհետև ձերբակալվել Վրաստանի քրեական օրենսգրքի 108 և 236 հոդվածների հատկանիշներով հետախուզման մեջ գտնվող ՇՈԹԱ ՑԱԳԱՐԵԻՇՎԻԼԻՆ:

2019թ. մարտի 1-ին ստացվել է ոուսերեն լեզվով Վրաստանի գլխավոր դատախազության կողմից ՇՈԹԱ ՑԱԳԱՐԵԻՇՎԻԼԻԻ հետախուզման հաստատումը և խնդրվել է վերջինիս նկատմամբ կիրառել կալանավորում:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Հմայակ Ստեփանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՇՈԹԱ ՑԱԳԱՐԵԻՇՎԻԼԻԻ հայտնաբերման կապակցությամբ Վրաստանի գլխավոր դատախազությունից ստացված փաստաթղթի՝ հետախուզումը հաստատելու և կալանավորում կիրառելու խնդրանքի մասին, հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հմայակ Ստեփանյանին (ID CARD 000931923, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Ավագ դատախազ



Ա.Հովհաննիսյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հ.Ստեփանյան

«01»..... 2019թ.